ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 13 " նոյեմբերի 2012թ.

№ 123-Ա

«ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 9-ի<<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Ժակլին Կոյայի Ավետիսյանին 2012թ. նոյեմբերի 14-ից նշանակել «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. 2012թ. նոյեմբերի 14-ից <<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրեն Նորա Իվանյանին ազատել «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք. «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 8-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, Ժ. Ավետիսյանի անձնական դիմումը:

3. «Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն — Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)

Ծատրյան Աշոտ	աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Ժակլին Ավետիսյան	«Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրեն (ընդունող)
Նորա Իվանյան	«Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ նախկին տնօրենի պաշտոնակատար (հանձնող)

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.նոյեմբերի 13
ք. Կապան